լավ զարդացած նորմալ կենդանիները:

Բուրդը յերկար, կոմվոլային, վոչ կարձ 7 ամ-ից, խիս, բրդի
վոլորվածության նորմալ բնույթով մարմնի բոլոր մասերում, բա-
րձրականին հավասարեցված, ճարագագրակությունը նորմալ քանակու-
թյամբ: Փորի վրայի բրդակալությունը բավարար է:

Այն կենդանիները, վորոնց փորի վրա անբավարար և

բրդակալությունը, բայց ուշնեն լավ զարգացած ձևեր և բրդի մեծ մասսա, նույնպես նշանակվում են 1 դաս:

Հատ եքստերյերի կենդանիները խոշոր են, լայն տակառանման ֆիգուրայով և լայն, լավ արտահայտված մսատու ձևերով:

Ելի տ խումբ բ.—Ելիտային խմբի վոչխարները պետք ե ունենան խոշոր ֆիգուրա, լայն և լավ զարգացած մսատու ձևեր, իրանը լայն, տակառաձև, գլուխը չոր, լայն ծոծրակով: Գեղմնային բուրդը հավասարեցված, շատապելը փակ, կոպիտ մազը (պեսիգա) բացակայում ե: Բուրդը կոմվոլ յերկարությունը շատապելում 7 ամ և ավելի, բավականաշափ խիտ, մարմնի բոլոր մասերում վոլորվածության նորմալ բնույթով: Բրդի բարակությունը ըստ Բրադ-Փորդի վոչ ցածը 60 վորակից (ըստ աղօլիան սիստեմի գերազանցապես A և B սորտիմենտի): Մարմինը պետք ե լավ բրդակալված լինի և առանձնապես ուշադրություն պետք ե դարձնել փորի վրայի բրդակալմանը:

Ա դաս նշանակվում են այն կենդանիները, վորոնք եքստերյերի և բրդի մթերավության նշաններով համտպատասխանում են առաջին զամբին, սակայն բուրդը 7 ամ-ից կարճ ե:

III դասում ընդդրկվում են այն կենդանիները, վորոնք ունեն պարզ արտահայտված թեքում դեպի մսատպությունը: Կենդանիները հաճախ ավելի խոշոր են, քան առաջին դասում, լայն, կլոր մարմնի ձեռվ, տակառաձև լայն իրանով, լավ արտահայտված մսատու հատկություններով: Բուրդը կոմվոլային ե, վոչ կարճ 7ամ-ից, սակայն կոպիտ կամ նոսր: Փորի վրայի բրդակալումը անբավարար ե:

IV դասում ընդդրկվում են բոլոր կենդանիները, վորոնք բանիտիբովկայի ժամանակ նշանակված չեն I, II, III դասերում:

VIII. ՆՐԲԱԴԵՂՄ ԽՈՅԵՐԻՑ ՅԵՎ ԿՈՄՏԱԲՈՒՐԴ ԱՐՔԻՆԵՐԻՑ ԱՏԱՑՎԱԾ ՄԵՏԻՍՆԵՐԻ ԲՈՆՏՏԻՐՈՎԿԱՆ

ա) ԸՆԴՀԱՇԽՈՒԹ ԿԸՆՈՒՆԵՐ

Կոպտաբուրդ վոչխարները նբրագեղմ խոյերով կլանման մետիզացիայի յենթարկելու հետևանքով ստացված բոլոր գեներացիաների մետիմները յենթարկվում են զասային բոնիտիբովկայի: Մետիմների բաշխումը առանձին դասերի կատարվում է ըստ բրդի վորակի: Մետիմային բրդի մթերման ստանդարտի համաձայն

մետիմները բրդի վորակով բաժանվում են 4 դասերի, առանձաց նելով մերինուային բուրդ ունեցող վոչխարներներ:

Յուրաքանչյուր դասի սահմաններում հոտերի ձեավորումը կատարվում է հաշվի տոնիկով կենդանիների խոշորությունը, եքստերյերը, կոնստիտուցիան և բրդի դույնը:

բ) ԳԱՍՍՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՋՈՒՄԸ

Այն անակսություններում, վորաեղ կան մերինոսի բուրդ ունեցող մետիմ վոչխարներ, նրանք առանձնացվում են ընդհանուր հոտից մերինոս-ի բուրդ ունեցող մետիմ վոչխարներից խումբը: Այդ կենդանիներից լավագույնները առանձնացվում են ընտիր խմբում, իսկ այն գեպքերում, յերբ մերինոսի բրդով կենդանիներ չկան, ընտիր խումբն առանձնացվում է I և II դասերի լավագույն կենդանիներից: Ընտիր խումբը առանձնացվում է մետիմների վրա խորացած սելեկցիոն աշխատանք տանիկու համար: Այն տնտեսություններում, վորաեղ մետիմների հետ միաժամանակ կան զտարցուն նրբագեղմ վոչխարներ և վորոնց վրա սելեկցիոն տոհմային աշխատանք և տարվում, ընտիր խմբի առանձնացնելը մետիմների թվից պարտադիր չե:

Մետիմ վոչխարների ընտիր խմբերի անհատական բոնիտիբովկայի զրանցումները տարվում են բարեկավող ցեղի համար սահմանված բանալու համաձայն:

Մերինոսի բըդ վոչ ոչ լի ար բն եր.—Այստեղ դասվում են մետիմ անասունները, վորոնց մոտ, մետիզացման հետեւանքով, բուրդը գեղմի հիմնական մասերում ունի պարզ արտահայտված մերինոսային քնույթ, բրագֆորյան 64 վորակի բարակությամբ: Գեղմը շատապելային կազմություն ունի, շտապելը փակ ե, բուրդն ունի պարզ արտահայտված մերինոսի վոլորվածություն, գեղմը միահավասարեցված ե: Մետիմ վոչխարների հոտերը կազմելու ժամանակ մերինոսի բուրդ ունեցողները կոմպլեկտավորվում են առանձին, ըստ վորում յուրաքանչյուր հոտում քիչ թե շատ միատարր կենդանիներ են ընտրվում:

Առաջին դասում առանձնացվում են հետևյալ վորակի բուրդ ունեցող կենդանիները: Բուրդը միատարր (օճորօճայ), գեղմը շատապելային կազմությամբ: Շտապելը բաց, բուրդն ունի պարզ արտահայտված մերինոսի վոլորվածություն, բրդի թելիկների ժայրում թույլատրվում և փոքր կոպտացում և չորություն:

Եղափումով փափուկ, բարակ բրդի գեպքում թույլատրվում

և հազիվ նշմարելի (ըմբայ) վոլորվածություն։ Բրդի բարակությունն ըստ բրադֆորդյան կլասիֆիկացիայի 60—58 վորակից վոչ ցածր։ I զամի բուրդը մերինոսի բրդից տարբերվում է միքիշ ավելի բաց շտապելով, թելիկների ծայրի աննշան կոպտացումով և մերինոսի ճարպաքրտինքի և փափկության (շոշափելիս) բացակայությամբ։ Դմակավոր վոչխարներից ստացված մետիսների բրդի մեջ թույլատրվում է մեռած մազ։

Յերկորդ գ դաս։ Բուրդը միատարր, գեղմն ունի շտապելային կազմություն։ շտապելը բաց է, վոլորքները տափակ, խոշոր (1 ամ վրա 4 վոլորք)։ Բրդի բարակությունը գեղմի հիմնական մասերում ըստ բրադֆորդի 58 և 56 վորակի յեւ թելիկների ծայրում թույլատրվում է զդալի կոպտացում։ Բրդի միատարբության և գեղմի շտապելային կազմության պահպանման հետ միատեղ թույլատրվում է շտապելի առանձին հյուսիկների վոչ մեծ հյուսիկային սրվածություն (ծայրերում)։ Դմակավոր վոչխարներից ստացված մետիսների բրդի մեջ պատահում է մեռած մազ։

Յերերրորդ գ դաս։ Բուրդը խառն և (վոչ միատարր), գեղմը յերկյարուսանի յեւ (ՃԵԿԱՐԵՍԻԵ), հյուսիկային կազմությամբ։ Բրդի հիմնական մասսան բազկացած և աղվամազի թելիկներից միջին բարակության և բարակ անցողիկ մազիկներից, բարակ քստամազի առկայությամբ, վորը բարձրանում և աղվամազից և անցողիկ մազից։

Յերրորդ գասին են պատկանում նաև անզլիական յերկարարությ ցեղի վոչխարների կոպիտ այլատեսակների տիպին պատկանող բրդի հյուսիկալիին կազմություն ունեցող մետիսները։ Ճարպապոչավոր վոչխարներից ստացված մետիսների մոտ մեռած մազը հազվագյուտ և պատահում։

Չորրորդ գ դաս։ Բուրդը խառն և (վոչ միատարր), գեղմը հյուսիկային կազմությամբ, բրդի բնույթը կոպտարուրդ, բայց մետիպիտիայի արտահայտված նշաններով, ինչպես որինակ աղվամազի և անցողիկ մազի զդալի քանակությունը, քստամազը նրացած և, ճարպաքրտինքի քանական ավելի շատ և, քան կոպտարուրդների մոտ։

Քստամազը խիստ կերպով բարձրացած և աղվամազի մասսայի վրա։

Վոլոշյան և այլ ճարպապոչավոր մայրերից ստացված մետիսների մոտ մեռած մազը թույլատրվում է. դմակավոր վոչխարների մետիսների մոտ մեռած մազը լինում է զդալի քանակությամբ։

Ծանրություն.—Մետիսների բոնիտիրովկայի ժամանակ վերոհիշյալ նշան-

ների հիման վրա բրդի գնահատումը կտարավում է գեղմի հիմնական մասերում, կողի և թիակների վրա վերջավորությունների վրա բրդի գովացացումը թույլատրվում է բոլոր գասերի համար, Եներկորդ կամի համար աղվերի վրա թույլատրվում է հյուսիկների թելքն գոյացում և մետաբր բրդի աստիճանաբար անցումը խառը բրդի, իսկ յերրորդ գասի գեղմը աղվերի յերկար հյուսիկներ, վորը հատուկ է չորսություն։

Կոպտարուրդ և կիսակոպտարուրդ վոչխարների (նրբարուրդ խոյերով) կրանման տրամակիաչումից ստացված չորրորդ և բարձր գեներացիայի մետիսները, վորոնք ունեն բացահայտ մերինոսի միատարր բնույթի բուրդ, գեղմի հիմնական մասերում բրդի բարակությունը վոչ ցածր 64 վորակից ըստ բրադֆորդի, գեղմը շտապելային կազմությամբ, շտապելը փակ, բուրդը լավ արտահայտված մերինոսի վոլորգածքով, բավական քանակությամբ ճարպաքրտինքով, գեղմը հավասարեցված, կենդանու վրա շեկ կամ այլ նշանների բացակայում՝ պատկանում են մետիսային ծագում ունեցող նրբարուրդ վոչխարների առանձին խմբին։ Վորպես բացառություն՝ մետիսային ծագում ունեցող նրբարուրդ վոչխարների խմբին կարող են փոխադրվել նաև III գեներացիայի կենդանիները, սակայն պարտագիր կերպով պիտի բավարարեն IV գեներացիայի համար հիշատակված մնացած պահանջներին կենդանիների վորակի տեսակետից և անպայմանորեն պիտի ծագած լինեն մերինոսային բուրդ ունեցող մետիս ճայրերի խմբից, վորը նշան և արգած աջ ականջի վրա «յերկանկի» կտածումով (տես Հրաննդի 43 յերև § 8):

Նկատի ունենալով, վոր վերջին տարիները (մինչև 1938թ.) շատ տնտեսություններում մետիս կենդանիների մոտ գեներացիան չի նշվել, հնարավոր համարել ժամանակավորաբես մետիսային ծագում ունեցող նրբարուրդ վոչխարների խմբին դասել այն սերունդը, վորը կրավարարի բրդի և այլ հատկանիշների ու ծագման պահանջներին (վորը սահմանված է III գեներացիայի համար) մետիսային ծագում ունեցող կենդանիները նրբարուրդների առանձին խմբին դասելու ժամանակ։

Բոնիտիրովկայի ժամանակ մետիսային ծագում ունեցող նրբարուրդ վոչխարների ծախ ականջի մեջտեղում կրոր անցք և կտրվածք և արգում վոչխարների ծախ ականջի մասի համապատասխան։

Միան հիշած նշումներն ստացած վոչխարները կարող են փոխադրվել զտարյուն հոտի համապատասխան դասը: Այդպիսով մետիւային ծագում ունեցող նրբարութների թվին առանձնացված կենդանիները ստանում են այն ցեղի անունը, վորով կլանում և կատարվում:

Տնտեսության մեջ տվյալ ցեղի առանձին տիպի կենդանիների ստեղծման գեղքում տվյալ տիպը յուրաքանչուր առանձին դեպքում ապրուացիայի յէ յենթարկվում ԽՍՀՄ Հողժողկոմատի հանձնաժողովի կողմից:

ՆՐԲԱԳԵՂՄ ԽՈՇԵՐԻՑ ԸԵՎ ԿԱՊՏԱՐՈՒՄԻ ՄԱՐԴՆԵՐԻՑ
ԽՏԱՅՎԱԾ ՄԵՑԻՄՆԵՐԻ ՀՈՏԵՐՈՒՄ ԶՈՒԿ ԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՎՈՐՈՇ ԽՈՇԵՐ ՀԱՏԲԵԼ

Կիսակոպտաբուրդ (մետխային) հոտերում խոյերի նշանակման ժամանակ անհրաժեշտ են հաշվի առնել մայրերի դասը, կենդանիների գեներացիան և մետիս վոչխարների կլանման աստիճանը նրբագեղմ խոյերով: Տվյալ շրջանի համար մետխային հոտերում նշանակվում են տվյալ շրջանի համար վորպիս պլանացին ճանաչված խոյերը, վոչխարաբուծության ուղղության համապատասխան: Մետխային հոտում մետխացնող խոյերը մայրական հոտերի վրա նշանակելու ժամանակ անհրաժեշտ եղակավարվել հետեւյալով, մերինոսի բուրդ ունեցող, նաև 1 և 1/1 դասերի մետիս մայրերի վրա նշանակվում են նորմալ տիպի կոմիտը բուրդ, լավ բըրդակալված, խոշոր բարձրության, իրանի լավ զարգացած հատվածներ, բրդի լավ խուզ, նորմալ ճարպաքրտինք ունեցող լավագույն մերինոսի խոյերը: III և IV դասերի վրա կարող են նշանակվել 1 և II դասերի մայրերի վրա նշանակված խոյերից ավելի կարճ բըրդով, սակայն բրդի բավարար մասսայով, բավարար խոտությամբ, բավարար բրդակալությամբ և նորմալ քանակի ճարպաքրտինք ունեցող խոյեր, առանձնացնելով նրանցից ավելի լավերին յերրորդ դասի համար: Մետխացիա անցկացնելու ժամանակ աղջակցական բուծումից խուսափելու համար չի կարելի թույլատրել, վորպեսզի բարելավող խոյերը ծածկեն իրենց մետիս աղջիկներին, վորի համար նպատակահարմար և յուրաքանչյուր յերկու ասրին մեկ անդամ բարելավող խոյերի փոփոխում կատարել:

IX. ԴՄԱԿԱՎՈՐ ՎՈԶՒԱՐՆԵՐԻ ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱՆ
ՀՆԴԱՑՄԱՆՈՒԹ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Բոնիտիրովկայի յենթակա յեն զտարյուն բոլոր (դմակավոր) վոչխարները, վորոնք պատկանում են խորհանասություններին, կուտանտեսություններին և կոլտանտեսականներին:

Բոնիտիրովկայի ժամանակ հիմնական ուշադրությունը պիտի դարձնել կոնստիտուցիայի ամրության, վոսկրակազմի զարգացման և ընդհանուր զարգացման վրա, կենդանու առողջության, արոտային զիրացման ընդունակության զարգացման, միաժամանակ բրդի մասսայի և վորակի նկատմամբ համապատասխան խորարզմայրեր զուգավորելու վրա:

2. Դմակավոր վոչխարների բոնիտիրովկան, վորպես կանոն, կատարվում և աշնանը, նախ քան խուզը: Առաջին անգամ բոնիտիրովկայի յենթակա հոտերում բոնիտիրովկայի յենթակա յեն 1 $\frac{1}{2}$ և բարձր տարիք ունեցող բոլոր վոչխարները:

Ծանոթաբերության: 7—9 ամսական հասակում գուգավորման թողնվազ կենդանիները բոնիտիրովկայի յեն յենթարկվում այդ հասակում: Մայրերի համար այդ բոնիտիրովկան վերջնական է համարվում, իսկ խոյերինը՝ նախնական, վորը ճաշվում և յերկրորդ բոնիտիրովկայի ժամանակ 2 տարեկան հասակում:

3. Մինչև մեկ տարեկան մատղաշները բոնիտիրովկայի յենթակա չեն և յեթե ծագել են ելիս կամ դասային մայրերից, վորոնք ծածկել են ըստ սերնդի վորակի ստուգվող խոյերի միջոցով, այդպիսիները ծնի ժամանակ յենթարկվում են նկարագրման, իսկ 4—6 ամսական հասակում նախնական զննման և զնահատման:

Վերոհիշյալ մայրերի զառները ծնվելու ժամանակ յենթարկվում են նկարագրման նրանց գունավորման, անոմալիաների և այլանդակությունների առկայության նկատմամբ: Բացի այդ, հաշվի յի առնվազական դասականի քաշը:

Ծծից կարելու ժամանակ նախնական զնահատման են յենթարկվում հետեւյալ հատկանիշների նկատմամբ՝ ա) ցեղը և տիպը, բ) բրդի մասսան, գ) բրդի յերկարությունը, դ) գեղմի գունավորումը, ե) վոսկրակազմի զարգացման, զ) բրդի զասի, է) կենդանու մեծության, ը) փորի բրդակալման Բացի այդ, ընդհանուր զնահատման և տրվում հասակավոր կենդանիների համար սահմանված մեթոդիկայի համաձայն, ընդվորում, կենդանիների վրա դասերի նշումներ չեն կատարվում:

4. Դմակավոր վոչխարների համար սահմանվում են բոնիտիրովկայի յերկու տեսակները, ինչպես և նրբարությունների համար:

ԳԱՍՏԱՑԻՆ ԲՈՆԵՏԻՐՈՎԿԱՅԱ

5. Յոնիտիրովկայի ժամանակ ամբողջ հոսու լամանվում և գասերի, ընդվորում I զասի լավագույն կենդանիները առանձնացվում են ելիտ խմբում: Կենդանիներին այս կամ այն դասին դասելու հիմնական չափանիշը նրանց մասի և բրդի թերատվությունն և նրանց հետ կապված կոնստիտուցիան:

ԱՆՀԱՏՍԱԿԱԾՆ ԲՈՆԵՏԻՐՈՎԿԱՅԱ.

6. Առաջին դասից ելիտային խումբն առանձնացված լավագույն կենդանիները անհատական բոնիտիրովկայի յեն յենթարկվում, ըստվարում յուրաքանչյուր կենդանի ընդունված բանալու միջոցով յենթարկվում և մանրամասն նկարագրման: Այդ կենդանիների ականջների կամ յեղջուրների վրա բոնիտիրովկայի ժամանակ համարներ են դրվում, յուրաքանչյուրի համար ԽՍՀՄ-ի չժկ կողմից սահմանված ձեր տոհմային քարտ և լրացվում, վորդի մեջ մտցվում և ցեղի, սեռի, տարիքի, կենդանու ծագման, նրա մթերատվության (կենդանի քաշը, բրդի խումբը և այլն) դնահատական տվյալները բոնիտիրովկայի ժամանակ և կենդանու այլ հատկանիշները:

7. Ելիտ խմբում առանձնացվում են լավագույն ֆենոտիպունեղող կենդանիները (խոյերը և մայրերը, խոյիկները և շիշակները), վորոնք համապատասխանում են հատի նախատեսնվող ուղղությանը և վոչխարների տիպին: Դրա հետ միաժամանակ ելիտայի մեջ կարող են առանձնացվել կենդանիներ, վորոնք չնայած նրան, վոր չեն համապատասխանում հատի նախատեսնվող ուղղությանը և վոչխարների տիպին, սակայն աշխի յեն ընկնում առանձին հատկանիշներով, վորոնք կարող են ողատագործվել ցանկալի տիպ ստեղծելու համար: Կենդանիները ելիտայի մեջ առանձնացնելու ժամանակ գերազանցություն պետք տալ բազմապտուղ և կաթնառատ մայրերին:

8. Դմակավոր վոչխարների անհատական բոնիտիրովկան մեկ տարեկան հասակում կատարվում է հետեւյալ հատկանիշների համաձայն: 1. ցեղը և տիպը, 2. վոսկրակազմի զարգացումը, 3. երստերյերը, 4. բրդի յերկարությունը, 5. քստամազի բարակությունը, 6. բրդի դասը, 7. ցեղմի հավատարեցված լինելը, 8. բրդի մասսան, 9. բրդի զույնը, 10. զմակի մեծությունը և ձեվը, 11. կենդանու մեծությունը, 12. փորի մասի բրդակալումը, 13. ընդհանուր դնահատականը:

Այդ հատկանիշներից բացի, խուզից հետո տոհմային քարտի մեջ մացվում են բրդի տարեկան խուզից տվյալները և կենդանի քաշը (առանց բրդի):

9. Դմակավոր վոչխարների անհատական բոնիտիրովկայի անցկացման ժամանակ կենդանու առանձին հատվածների գնահատման կանոնների և բոնիտիրովկայի բանալոր համաձայն նրանց դրանցման հետեւյալ կանոններն են սահմանվում:

1. Կենդանու ցեղը և տիպը

Կենդանու ցեղը նշանակվում է ցեղի անվան սկզբնառառով: Քայլի այդ, յուրաքանչյուր ցեղի սահմանում կենդանիները ըստ տիպերի բաժանվում են յերեք խմբի՝

Տիպ «Ե»—մսա-ճարպային կենդանիներ, լավ զարգացած մսա-ճարպային մթերատվությամբ, լավ բրդակալությամբ, բրդի լավ մասսայով, ըստ վորակի II զասից վոչ ցածր (գիսարական հոտերում թույլատրվում են III զասի բուրդ ունեցող կենդանիներ, սակայն բրդի լավ խտությամբ և բավական մասսայով),

Տիպ «Բ»—ղեղի բրդատվությունը թեքում ունեցող կենդանիներ, մսա-ճարպային մթերատվության սակավ արտահայտությամբ, I զասի բրդով կամ շատ մեծ մասսա ունեցող II զասի բրդով, վորը կազմված և յերկար հյուսիկներից, բարակ քստամազով կամ միջանկալ մազով (վերջինը հաճախ նկատվում և սարացայի ցեղի վոչխարների մոտ):

Տիպ «Ը»—կենդանիներ, արտահայտված մսա-ճարպային մթերատվությամբ, կոնստիտուցիայի վորոշ կոպտացման առկայությամբ, III զասի բրդով, չոր և մեռած մաղերի մեծ քանակությամբ անունը զրվում է տիպությամբ:

Ցեղի անունը զրվում է տիպը ցույց տվեց նշանի առջևից—«Շ» գիսար, «Ձ» եղելլայ, «Ը» սարաջա և այլն:

2. Գլխի վոսկրակազմի բնույթը և յեղջյուրների առկայությունը

Վոսկրակազմը բնույթագրվում է կենդանու գլխի լայնության և յերկարության հարաբերությամբ ու կենդանու վոսկրակազմի ընդհանուր զարգացմամբ:

Ցեղի համար նորմալ գլուխը նշանակվում է $\frac{3}{8}$, լայն, կռպիտ, ծանր գլուխը— $\frac{4}{8}$, նուրբ, նեղ, յերկարծ գլուխը— $\frac{2}{8}$: Ցեղյուրների առկայությունը նշանակվում է $\frac{3}{8}$ -ի կողքից ավելացնելով «ՔՕՐ», անյեղյուրավորությունը նշանակելով «ԿՈՄ» և յեղյուրների յելունքները «ՅԱՎ»:

3. Եխտերիք

Եքստեր յերի նկարագրությունը կատարվում է ուղղանկյան սիստեմով, ընդգորում նշվում են միմիայն աչքի ընկնող և այս կամ այն ցեղին հատուկ նորմալ զարդացումից շեղված հատվածները՝

1		լայն մնակ
2		նեղ (սուր) մնակ
3		լայն կուրծք
4		նեղ կուրծք
5		լայն գալակ
6		նեղ (կտուրաձեղ) գալակ
7		յերկար, ձգված փիզուրա
8		կարճ մեջք
9		կախ ընկած մեջք
10		յերկար գալակ
11		կարճ „„
12		կախ „„
13		սեղմվածություն թիակների հետեւից
14		թեք կողեր (տակառաձև իրան)
15		տափակ կողեր (նեղ)
16		ճոխ ազդրեր
17		սիհար ազդրեր
18		բարձրավոր փիզուրա
19		խորը փիզուրա (ցածր կենդանի)
20		վոտքերի իքսաձև դրվածք
21		„ թրածել „

4. Բրդի յերկարությունը

Բրդի յերկարությունը չափում է սանտիմետրաժին քանությով, կոտորակով առանձին նշելով՝ քստամազի (հյուսիկների) յերկարությունը և աղվամազի բարձրությունը: Քստամազի յերկարությունը դրվում է վորպես համարիչ, իսկ աղվամազի բարձրությունը՝ վորպես հայտարար:

5. Քստամազի բարակությունը

Քստամազի նորմալ բարակությունը նշանակվում է մեծատառ «T»: Բարակ հալաստիկ քստամազը նշվում է «T» ընդգծումով և կոպիտ չոր քստամազը նշվում է «T» տառի վերեկց սեպ նշանով:

6. Բրդի զլխավոր տեսակները

Բրդի զլխավոր տեսակը (դասը) նշանակվում է «C» տառով, նշելով մթերման ստանդարտով սահմանված տեսակը և նշանակվում է՝ առաջին տեսակ՝ «C₁», յերկրորդ տեսակ՝ «C₂» և յերրորդ տեսակ՝ «C₃» և այլն:

7. Գեղմի մեջ բրդի միահավասարությունը

Հավասարեցված համարվում է այն կենդանիների գեղմը, վորոնց բուրդը մարմնի զանազան մասերում մեկ սորտի յեպատկանում: Այդպիսի գեղմը նշանակվում է «աշ տառով»: Վոչ բավականաչափ հավասարեցված գեղմը, յերբ գեղմի հիմնական մասերի բուրդը (կողերի, թիակի) տարբերվում է ազդրերի վրայի բրդից մեկ դասով (յերկրորդ—յերրորդ, առաջին—յերկրորդ), նշանակվում է «առ» տառով: Անհավասարեցված գեղմ, յերբ թիակների վրա լ դասի բուրդ և, իսկ ազդրերի վրա III դասի, նշանակվում է «Է» տառով:

8. Բրդի մասսան

Բրդի մասսան նշանակվում է հետևյալ ձևով՝
«տա նորմալ (միջակ) բրդի մասսա
«ուն» բրդի մեծ մասսա
«ուն» բրդի անրավականաչափ մասսա:

9. Կենդանու գումավորումը և գեղմի գույթը

Կենդանու գումավորումը նշանակվում է հետևյալ կերպ՝

սպիտակ Օ, շեկ ⊕, դուրս ⊕, սել ⊕, մոխրագույն (շիքազի) ⊕,
խայտարղետ ⊕:

Խայտարղետ գունագորման ժամանակ տառերով ավելացվում
է հիմական գույնը և խայտարղետությունը, սկզբում նշելով
հիմական գույնը, ապա խայտարղետը:

10. Դմակի մեծությունը և ձեվը

Դմակը նշանակվում է «Կ» տառով, ավելացնելով դմակի
մեծությունը և ձել բնորոշող սկզբնատառերը՝

«Կ. 6. ո.»	դմակը	մեծ վերև ձգված
«Կ. 6. ը.»	»	իջած
«Կ. 6. ց.»	»	կախ ընկած
«Կ. ը.»	»	միջակ վեր ձգված
«Կ. ց. ը.»	»	իջած
«Կ. Մ. ո.»	»	փոքր վեր ձգված
«Կ. Մ. ը.»	»	իջած

11. Կենդանու մեծությունը

Կենդանու մեծությունը գնահատվում է 3 բարային սիստե-
մով (կենդանի քաշի տվյալներով):

1. խոշոր կենդանի, 2. միջակ կենդանի, 3. մանր կենդանի:

12. Կենդանու բնդիանուր գնահատականը

Կենդանու ընդհանուր գնահատականը սահմանվում է վերո-
հիշյալ բոլոր հատկանիշների գնահատման հիման վրա, հաշվի առ-
նելով կենդանու ծագման տվյալները, նրա առողջությունը և այլն,
և նշանակվում է զերոներով՝

00000—գերազանց կենդանի՝ աչքի ընկնող մաս-ճարպային
մթերատվությամբ և բրդի լավ մասսայով, ըստ վորակի վոչ ցածր
II դասից (գիսարների մոտ թույլատրվում է նաև բրդի III դասը):

000—լավ կենդանի, լավ արտահայտված մաս-ճարպային և
բրդի մթերատվությամբ, առաջին, յերկրորդ և յերրորդ դասերի բր-
դով:

000—բավարար կենդանի, միջակ մթերատվությամբ հոտի
սահմանում, բուրդն առաջին, յերկրորդ, յերրորդ դասերի:

00—անբավարար կենդանի:

13. Փորի վրայի բրդակալումը

Յեղի համար փորի վրայի նորմալ բրդակալումը չի նշանակ-
վում, Փորի վրայի լավ բրդակալումը նշվում է միջին զերոների
ընդգծումով, փորի վատ բրդակալումը նշանակվում է զերոների
գերեզմից սեպ և նշանով:

ԴՄԱԿԱՎՈՐ ՎԱԶԻՍԻՄԵՐԻ ԴԱՍԵՐԻ

ԲՆՈՒԹՅԱԿՐՈՒՄԸ

Առաջին դասում առանձնացվում են կենդանիներ, վորոնք
ունեն ամուր կոնստիտուցիա, լավ զարգացած վոսկրակազմով,
լավ արտահայտված մաս-ճարպային և բրդի մթերատվությամբ,
յայն և բավականաչափ խորը իրանով, ամուր վոտքերի վրա, փորի
նորմալ բրդակալվածությամբ: Բուրդը պետք է լինի բավականա-
չափ խիտ, չոր և մեռած մազերի անհզան քանակով, ըստ վո-
րակի բուրդը վոչ ցածր II դասից:

Տանըրայրան: Գիսարական հոտերի առաջին դասում թույլատրվում են կեն-
դանիներ նաև III դասի բրդով, վորոնք ունեն բավականաչափ չոր կոնս-
տիտուցիա և բրդի բավարար մասսայով, ուժեղ արտահայտված մաս-
ճարպային մթերատվությամբ:

Եթե կ ը ո ր գ դասին պատկանում են ավելի կոպիտ կենդա-
նիները (և սարօն կոնստիտուցիա), վորն ընդհանուր զարգացմամբ
հետ չի մնում I դասի կենդանիներից, մաս-ճարպային մթերա-
տվությամբ և եքստերյերով, ունենալով III դասի բրուրդ, չոր և
մեռած մազերի բավականաչափ քանակությամբ կամ ել առնեն
անբավականաչափ բրդի մասսա, փորի վատ բրդակալվածությամբ:

Եթե ը ո ր գ դասին պատկանում են կենդանիներ, վորոնք թե-
քում ունեն դեպի բրդատվությունը, ավելի նուրբ չոր կոնստիտու-
ցիայով, ավելի մանր, թույլ զարգացած մասճարպային մթերա-
տվությամբ, բայց լավ զարգացած բրդատվությամբ, հաճախակի
ունեն վոչ բավականաչափ լայն իրան, վոտքերի վատ զրվածքով,
բուրդը բավականաչափ խիտ, չոր և մեռած մազերի վոչ մեծ քա-
նակությամբ, ըստ վորակի վոչ ցածր II դասից:

Չորրորդ դասին պատկանում են մանր կենդանիները մաս-
ճարպային մթերատվության վատ զարգացմամբ, կոպիտ բրդով
մեծ քանակությամբ չոր և մեռած մազերով և մանր կենդանիներ՝
բրդի անբավականաչափ մասսայով և փորի վատ բրդակալ-
վածությամբ:

սպիտակ Օ, շեկ ⊕, դորւք ⊕, սեր ⊕, մոխրագույն (շիբազի) ⊕,
խայտարղետ ⊕:

Խայտարղետ գունավորման ժամանակ տառերով ավելացվում
և հիմական գույնը և խայտարղետությունը, սկզբում նշելով
հիմական գույնը, ապա խայտարղետը:

10. Դմակի մեծությունը և ձեվը

Դմակը նշանակվում է «Կ» տառով, ավելացնելով դմակի
մեծությունը և ձեր բնորոշող սկզբնատառերը՝

«Կ. 6. ո.»—դմակը	մեծ վերև ձգված
«Կ. 6. ը.»	» իջած
«Կ. 6. ց.»	» կախ ընկած
«Կ. ց.»	միջակ վեր ձգված
«Կ. ց. ը.»	» իջած
«Կ. մ. ո.»	փոքր վեր ձգված
«Կ. մ. ը.»	» իջած

11. Կենդանու մեծությունը

Կենդանու մեծությունը գնահատվում է 3 բարային սիստե-
մով (կենդանի քաշի տվյալներով):

1. խոշոր կենդանի, 2. միջակ կենդանի, 3. մասր կենդանի:

12. Կենդանու ընդհանուր գնահատականը

Կենդանու ընդհանուր գնահատականը սահմանվում է վերո-
հիշալ բոլոր հատկանիշների գնահատման հիման վրա, հաշվի առ-
նելով կենդանու ծագման տվյալները, նրա առողջությունը և այլն,
և նշանակվում է զերոներով՝

00000—գերազանց կենդանի՝ աշքի ընկնող մսա-ճարպային
մթերատվությամբ և բրդի լավ մասսայով, ըստ փորակի վոչ ցածր
II դասից (գիտարների մոտ թույլատրվում է նաև բրդի III դասը):

000—լավ կենդանի, լավ արտահայտված մսա-ճարպային և
բրդի մթերատվությամբ, առաջին, յերկրորդ և յերրորդ դասերի բր-
դով:

000—բավարար կենդանի, միջակ մթերատվությամբ հոտի
սահմանում, բուրդն առաջին, յերկրորդ, յերրորդ դասերի:

00—անբավարար կենդանի:

13. Փորի վրայի բրդակալումը

Յեղի համար փորի վրայի նորմալ բրդակալումը չի նշանակ-
վում: Փորի վրայի լավ բրդակալումը նշվում է միջին զերոների
ընդունակությունով, փորի վատ բրդակալումը նշանակվում է զերոների
չերեկից սեպ և նշանով:

ԴՍ Ա. Ա. Վ. Ո. Վ. Ո Զ Խ Ե Ն Ե Ր Ե Ր Ի Դ Ա Մ Ե Ր

ԲՆՈՒԹՅՈՒՆԻ ՏՐՈՒՄԸ

Առաջին դասում առանձնացվում են կենդանիներ, վորոնք
ունեն ամուր կոնստիտուցիա, լավ զարգացած վոսկրակազմով,
լավ արտահայտված մսա-ճարպային և բրդի մթերատվությամբ,
չայն և բավականաչափ խորը իրանով, ամուր փոտքերի վրա, փորի
նորմալ բրդակալվածությամբ: Բուրդը պետք է լինի բավականա-
չափ խիստ, չոր և մեռած մազերի աննշան քանակով, ըստ վո-
րակի բուրդը վոչ ցածր II դասից:

Ենթարկյալն դիմարական հոտերի առաջին դասում թույլատրվում են կեն-
դանիներ նաև III դասի բրդով փորնք ունեն բավականաչափ չոր կոնս-
տիտուցիա և բրդի բավարար մասսայով, ուժեղ արտահայտված մսա-
ճարպային մթերատվությամբ:

Երբ որդ դասին պատկանում են ավելի կոպիտ կենդա-
նիները (և սարու կոնստիտուցիա), վորն ընդհանուր զարգացմամբ
հետ չի մնում I դասի կենդանիներից, մսա-ճարպային մթերա-
տվությամբ և եքստերյերով, ունենալով III դասի բուրդը, չոր և
մեռած մազերի բավականաչափ քանակությամբ կամ ել ունեն
անբավականաչափ բրդի մասսա, փորի վատ բրդակալվածությամբ:

Երբ որդ դասին պատկանում են կենդանիներ, վորոնք թի-
քում ունեն գեպի բրդատվությունը, ավելի հուրը չոր կոնստիտու-
ցիայով, ավելի մասր, թույլ զարգացած մսա-ճարպային մթերա-
տվությամբ, բայց լավ զարգացած բրդատվությամբ, հաճախակի
ունեն վոչ բավականաչափ լայն իրան, փոտքերի վատ զրվածքով:
Բուրդը բավականաչափ խիստ, չոր և մեռած մազերի վոչ մեծ քա-
նակությամբ, ըստ վորակի վոչ ցածր II դասից:

Չորրորդ դասին պատկանում են մասր կենդանիները մսա-
ճարպային մթերատվության վատ զարգացմամբ, կոպիտ բրդով
մեծ քանակությամբ չոր և մեռած մազերով և մասր կենդանիները՝
բրդի անբավականաչափ մասսայով և փորի վատ բրդակալ-
վածությամբ:

սպիտակ Օ, շեկ ⊕, գորշը ⊕, սեր ⊕, մոխրագույն (շիրազի) ⊕,
խայտաբղետ ⊕:

Խայտաբղետ գունավորման ժամանակ տառերով ավելացվում
և հիմնական գույնը և խայտաբղետությունը, սկզբում նշելով
հիմնական գույնը, ապա խայտաբղետը:

10. Դմակի մեծությունը և ձեվը

Դմակը նշանակվում է «Կ» տառով, ավելացնելով դմակի
մեծությունը և ձեւը բնորոշող սկզբնատառերը՝

- «Կ. 6. ու»—դմակը մեծ վերև ձգված
- «Կ. 6. ը» » իջած
- «Կ. 6. ը» » կախ ընկած
- «Կ. ը» » միջակ վեր ձգված
- «Կ. ը» » իջած
- «Կ. մ. ու» » փոքր վեր ձգված
- «Կ. մ. ը» » իջած

11. Կենդանու մեծությունը

Կենդանու մեծությունը գնահատվում է 3 բալային սիստե-
մով (կենդանի քաշի տվյալներով).

1. խոշոր կենդանի, 2. միջակ կենդանի, 3. մանր կենդանի:

12. Կենդանու ընդհանուր գնահատականը

Կենդանու ընդհանուր գնահատականը սահմանվում է վերո-
հիշալ բոլոր հատկանիշների գնահատման հիման վրա, հաշվի առ-
նելով կենդանու ծագման տվյալները, նրա առողջությունը և այլն,
և նշանակվում է զերոներով՝

00000—գերազանց կենդանի՝ աչքի ընկնող մսա-ճարպային
մթերատվությամբ և բրդի լավ մասսայով, ըստ վորակի վոչ ցածր
II դասից (գիսարների մոտ թույլատրվում է նաև բրդի III դասը):

0000—լավ կենդանի, լավ արտահայտված մսա-ճարպային և
բրդի մթերատվությամբ, առաջին, յերկրորդ և յերրորդ դասերի բրր-
դով:

000—բավարար կենդանի, միջակ մթերատվությամբ հոտի
սահմանում, բուրդն առաջին, յերկրորդ, յերրորդ դասերի:

00—անբավարար կենդանի:

13. Փորի վրայի բրդակալաւմը

Յեղի համար փորի վրայի նորմալ բրդակալաւմը չի նշանակ-
վում: Փորի վրայի լավ բրդակալաւմը նշվում է միջին զերոների
ընդգծումով, փորի վատ բրդակալաւմը նշանակվում է զերոների
վերեվից սեպ և նշանով:

ԴՄԱԿԱՎՈՐ ԳՈՏԻՆԱՐՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ

ԲՆՈՒԹՅԱԳՐՈՒՄԸ

Առաջին դասում առանձնացվում են կենդանիներ, վորոնք
ունեն ամուս կոնստիտուցիա, լավ զարգացած վոսկրակազմով,
լավ արտահայտված մսա-ճարպային և բրդի մթերատվությամբ,
լայն և բավականաչափ խորը իրանով, ամուր վոտքերի վրա, փորի
նորմալ բրդակալածությամբ: Բուրգը պետք է լինի բավականա-
չափ խիտ, չոր և մեռած մազերի անհան քանակով, բատ վո-
րակի բուրգը վոչ ցածր II դասից:

Տասըրաբյան: Գիսարական հոտերի առաջին դասում թույլատրվում են կեն-
դանիներ նաև III դասի բրդով, վորոնք ունեն բավականաչափ չոր կոնս-
տիտուցիա և բրդի բավարար մասսայով, ուժեղ արտահայտված մսա-
ճարպային մթերատվությամբ:

Յերկրորդ դասին պատկանում էն ավելի կոպիտ կենդա-
նիները (ս սրոյ կոնստիտուցիա), վորն ընդհանուր զարգացմամբ
չետ չի մնում I դասի կենդանիներից, մսա-ճարպային մթերա-
տվությամբ և եքստերյերով, ունենալով III դասի բուրգ, չոր և
մեռած մազերի բավականաչափ քանակությամբ կամ ել ունեն
անբավականաչափ բրդի մասսա, փորի վատ բրդակալվածությամբ:

Յերերրորդ դասին պատկանում են կենդանիներ, վորոնք թի-
քում ունեն զեպի բրդատվությունը, ավելի նուռը չոր կոնստիտու-
ցիայով, ավելի մանր, թույլ զարգացած մսաճարպային մթերա-
տվությամբ, բայց լավ զարգացած բրդատվությամբ, հաճախակի թի-
քուն վոչ բավականաչափ լայն իրան, վոտքերի վատ զրվածքով:
Բուրգը բավականաչափ խիտ, չոր և մեռած մազերի վոչ մեծ քա-
նակությամբ, բատ վորակի վոչ ցածր II դասից:

Չորրորդ դասին պատկանում են մանր կենդանիները մսա-
ճարպային մթերատվությամբ վատ զարգացմամբ, կոպիտ բրդով
մեծ քանակությամբ չոր և մեռած մազերով և մանր կենդանիներ՝
բրդի անբավականաչափ մասսայով և փորի վատ բրդակալ-
վածությամբ:

Մանրաւրյան: Դեպի կոնստիտուցիայի նըբությունը գերզարգացած վոչխարները, վորպես բորտովին անցանկալի տիզ դժմակափոք վոչխարաբուծության մեջ և վորպես չափազանց սակալ պատահող կենդանիներ, խռանվում են առնմային հոտից:

Դմակավոր վոչխարաբուծության հոտի ելիտ խմբում առանձնացվում են բարձր արտահայտված մտաշճարպայի ն մթերատվությամբ և ամուր, ուժեղ կոնստիտուցիա ունեցող կե նդանիներ: Ելիտայի կոմպլեկտավորումը հիմնականում պիտի դնա 1 դասի լավագույն կենդանիների առանձնացումով,՝ ըստվորում ուշադրություն պետք ե զարձի վոչ միայն մասամբ պայացին մթերատվության վրա, այլև բրդի վորպակի և երստերյերի վրա: Ելիտ կենդանիները պետք ե ունենան ամուր վուկրակազմ, լավ կազմվածքով, բավականաչափ լայն և խորը իրանուվ, ամուր վոտքերի վրա, լավ զարգացած, լայն և բարձր զմակով, բրդի լավ մասայով, փորի լավ բրդակալվածությամբ: Առանձին գեղքերում հատկապես զիտարյան վոչխարների հոտերում, վորտեղ մասամբային մթերատվությունն ունի վճռական նշանակություն, թույլատրվում է ելիտայում թողնել լատ զարգացման և մասամբային մթերատվությամբ առանձնապես աշքի ընկնող լ զասի կենդանիներ, իսկ դադարիստանի դմակավոր և սարաշինյան վոչխարների հոտերում բրդատվությամբ առանձնապես աշքի ընկնող III դասի կենդանիներ:

Դմակավոր վոչխարների հոտերի ելիտայի և I դասի մեջ կենդանիներ ընտրելու համար սահմանվում են հետեւյալ մինիմալ-ցուցանիշները:

Մինիմալ կենդանի քաշը $1\frac{1}{2}$ տարեկան հասակում
(կիլոգրամներով)

Խոյեր	Խոյեր		Մայրեր	
	Ելիտա	I դաս	Ելիտա	I դաս
Քիսաբյան	80	72	70	63
Եղելքայ և այլ դմակավոր	70	63	60	54
Սարաշինյան	63	57	53	48

ԽՈՅԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Ելիտ խմբի և զասային մայրերի վրա նշանակվում են ելիտ խոդեր: Ելիտ խոյերի պակասության գեղքում զասային մայրերի վրա նշանակվում են առաջին դասի լավագույն խոյեր: Մաքուր

վիճակում բուծվող դմակավոր վոչխարների վորակական բարեւավումը պիտի կատարվի դմակավոր վոչխարների գիտարյան, ապահաջինյան և եղելքայան ցեղերի լավագույն ոտրողյաների միջոցով:

X. ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՆՇԱՆ ԱՆԵԼԸ

Տոհմային գործի ձիշտ հաշվառման նպատակով անհրաժեշտ և խորհտնառեսությունների և կոլտնտեսությունների վոչխարների հոտերում պարտադիր կարգով անցկացնել վոչխարների նշան անելը:

Վոչխարների նշան անելը կատարվում է՝

ա) ականջների կտածումով (տայորօվկա):

բ) ականջին մետաղյա գնդեր անցկացնելով.

գ) յեղջուրքները խարանելու միջոցով.

դ) ականջների վրա կտրվածքներ կատարելով.

Տոհմային վոչխարների հիմնական նշան անելը, դա ականջների կտածումն է (տայորօվկա):

Դունավոր ականջներ ունեցող վոչխարների նշան անելը կատարվում և ականջի գինդերով:

Դասային հոտի և ըստ զեներացիայի մետիս մաքիների և շիշակների նշան անելը կատարվում և ականջների կտրվածքների միջոցով:

Նշան անելը ըստ վոչխարների առանձին խմբերի կատարվում և հատեյալ կարգով:

1. Ելիտ մայրերից ծնված գառներին ծնվելուց հետո յերկրորդ — յերրորդ որը կտածման միջոցով ձախ ականջի վրա նշանակվում և մոր համարը: Ցեֆե մաքին ծնում և զույգ գառներ, այդ զեպքում մոր համարի տակ ավելի խոշոր զառան ականջի վրա նշանակվում է 1 թվանշանը, իրեն մեծությամբ յերկրորդ զառանը զրգում է 2 թվանշանը, իսկ յերեք գառ ծնվելու դեպքում, ամենափոքը զառը նշանակվում է 3 թվանշանով:

Մինչև մեկ տարեկան հասակի ելիտ զառների անհատականամբողջ հաշվառումը կատարվում է ձախ ականջի համարով (մոր համարով):

2. Ելիտ մայրերի գառները մեկ տարեկան հասակում բռնիւթիրովկայի յենթարկելու մամանակ ելիտ հոտում առանձնացված բոլոր զառները (եզ, փորձ) անհատական համարով նշան են ար-

վում կտածում անելու միջոցով — աջ ականջի վրա: Ամեն տարի անհատական համարներն սկսվում են մեկից: Անհատական համարի առաջից դրվում է ծննդյան թիվը, որինակ՝ 1938 թ. ձեռված № 687 շիշակը պետք է նշան արվի — 8687, վորտեղ առաջին թվանշանը նշանակում է շիշակի ծննդյան տարին (այսինքն 1938 թ.):

3. Դասային հոտից ելիտայի մեջ առանձնացվող շիշակների ու մաքիների աջ ականջի վրա կտածման միջոցով, նույն կարդող դրվում է անհատական համարը և ծննդյան թիվը:

Մանրաւթյուն: Հարմարության և աշխատանքը արագ կատարելու համար ելիտ մայրերի աջ ականջի կտածման անհատական համարից բացի, ձախ ականջից կախվում է աջ ականջի համարը ցույց տվող զինոց, իսկ յեղյուրակոր խոյերին աջ ականջի համարը խարսնվում է աջ յեղյուրի վրա:

4. Բատ սերնդի վարակի խոյերի ստուգման համար նշանակված մայրերը և առաջին դասի լավագույն մայրերը, վարունք հետագայում (2 տարեկան դառնալուց) կարող են դրանցվել Ծ. Տ., սակայն չեն բավարարում տնտեսության ելիտայի պահանջներին, ինչպես նաև դրանց վողջ սերունդը, նշան են արվում նման յեղանակով ելիտային (ընտիր) կենսանիների հետ: Առաջին դասի մնացած և ցածր բոլոր դասերի մայրերը նշան են արվում միայն ականջի կտրվածքներով: Համարներով անհատական նշաններ կատարելու ժամանակ ծննդյան տարեթիվը կենդանու համարի թվանշանի նկատմամբ ուղղահայց և դրվում:

5. Սերնդի ծաղման հաշվառման և անսխառեմ աղքակցական բուծումը կանխելու համար մեկ խոյից ստացված դասային հոտի գառներին (ամբողջ հոտի կամ ել արանձին պահվող մայրերի խմբի գծով) կտածման միջոցով դրվում է հոր համարը:

6. Գունավոր ականջ ունեցող վոչխարները կտածման փոխարեն համարակալվում են ականջի զինողերով:

7. Կտածման միջոցով համարները պետք է դրվեն ականջի ներսի կողմի մաքուր մակերեսի վրա, ականջի կրծկային ճյուղերի արանքում: Համարի թվերը պետք է զուգահեռ գնան ականջի յերկարությամբ և զրա մեջտեղից: Կտածումը արվում է դենտոտուրատ սպիրտի մեջ մինչև քսուկի խտության լուծված ճյութառան մասը ծեծված հոլանգուկան մրից (սայա): Կտածումը կտարկում է խնամքով, զոստեխնիկի հսկողությամբ և յուրաքանչյուր 10—20 որլ մեկ անգամ ստուգվում է, վորպեսողի ժամանակին նորոգվի համարը:

8. Բոնիտիբովկայի ժամանակ բոլոր յեղերի դասային մայրերը նշան են արվում աջ ականջի կտրվածքով:
Դասային անելլը կտարարվում է հետեւյալ կերպ.
Ելիտա (ընտիր) համարակալվում են անհատապես:
I դաս — աջ ականջի ցածի յեղերին մեկ կտրվածք.
II դաս — աջ ականջի ցածի յեղերին մեկ կտրվածք.
III դաս — աջ ականջի վերին յեղերին մեկ կտրվածք.
IV դաս — աջ ականջի վերին յեղերին մեկ կտրվածք և նույն ականջի ցածի յեղերին մեկ կտրվածք:

Նույն ձևով ել նշան են արվում դասերը մետիսների բոնիտիբովկայի ժամանակ: Մերինսոսի բնույթի բուրդ ունեցող մետիսները նշան են արվում աջ ականջի վրա յերկանկ (ՅԱԼԿԱ) կտրրածքով:

9. Մետիսների գեներացիան նշանակվում է ձախ ականջի վրա հետեւյալ կերպ:

I գեներացիայի մետիսները նշան են արվում ձախ ականջի ցածի յեղերին մեկ կտրվածքով.

II գեներացիայի ձախ ականջի ցածի յեղերին յերեք կտրրածքով.


III գեներացիայի ձախ ականջի ցածի յեղերին յերեք կտրրածքով:

IV գեներացիայի ձախ ականջի վերի յեղերին մեկ կտրվածքով.

V գեներացիայի ձախ ականջի վերի յեղերին յերկու կտրվածքով.

VI գեներացիայի ձախ ականջի վերի յեղերին յերեք կտրվածքով նրբարուրդ և կիսակոպտարուրդ խոյերով տեղական կոպտարուրդ մայրերի մետիսացումից ստացված մետիս զառների գեներացիայի նշանակումը պարտադիր է. Նույնպես պարտադիր է մետիս մայրերից ստացված զառների գեներացիայի նշան անելլը, վորոնց մայրերի գեներացիան նախառա այդ սահմանված է յեղեր:

Նպատակ ունենալով իրականացնել բեղունության գծով տարկող սելիկցիան, զույգերի թվում ծնված զառների ձախ ականջի ծայրում, ծնվելու ժամանակ, յերկանկի կտրվածք և արվում:



Զույգերի թվում ծնված մայրերի զուգորյակ և յեռյակ ծնված գառները (յերկրորդ զուգորյակ սերունդը) նշան են արվում ձախ ականջի ծայրի յերկճանկի մեկ մասի կտրելու միջոցով:

ՁԱԽ ԱԿԱՆՋ

ԱՅ ԱԿԱՆՋ

11. Տոհմային և դասային վոչխարներին նշված յեղանակներով նշան անելը պարտադիր և բոլոր տնտեսությունների համար: Նշան անելու այլ յեղանակները, ինչպիս նաև ականջի վրա այլ նշաններ անելը արգելվում է:

XI. ԲՈՆՏՏԻՐՈՎԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Խորհուտնտեսություններում վոչխարների բոնիտիրովկայի դեկալարությունը իրականացվում և խորհանտեսությունների ժողկոմատի համապատասխան վարչությունների կողմից:

Կոլխոզների և կոլխոզնիկների վոչխարների բոնիտիրովկան իրականացվում և հողորդանների կողմից և անց և կացվում նրանց զոտեխնիկական ուժերով:

2. Կետրուծարանների շրջաններում կոլխոզների և կոլխոզնիկների վոչխարների բոնիտիրովկայի կազմակերպման ղեկավարությունը դրվում է պետքուծարանի ղեկավարության վրա, իսկ պետքուծարանի գործություն գոնայից գուրմ՝ հողբաժնների վրա:

3. Բոնիտիրովկայի կազմակերպման պատասխանատվությունը դրվում է՝

ա) խորհրդային տնտեսություններում—դիրեկտորների, ավ. զոտեխնիկների և տոհմային գործի զոտեխնիկների վրա.

բ) պետքուծարաններում—դիրեկտորների և ավ. զոտեխնիկների վրա.

գ) պետքուծարանների կողմից չսպասարկվող շրջաններում՝ հողբաժնի ավ. զոտեխնիկի վրա:

4. Զոտեխնիկ բոնիտայորները պատասխանատվ յեն բոնիտիրովկայի ճիշտ անցկացման համար և սույն հրահանողի համապատասխան անձնապես նշանակվում էն:

ա) խորհուտնտեսությունների ժողկոմատի, խորհանտեսությունների դուռը համապատասխան վարչությունների պետերի

բ) ՀԺԿ խորհրդային տնտեսություններում, կոլտնտեսություններում հանրապետական, յերկրային (մարզային) հողժողկումատի անառնապահական վարչության պետի հատուկ հրամանով:

5. Վոչխարների բոնիտիրովկան պետք և հանձնաբարպարվի վոչխարների բոնիտիրովկայից հատուկ պատարաստություն ունեցող գոտեխնիկ-բոնիտայորներին կամ վոչխարների բոնիտիրովկայի առպարեզում գործնական ստած ունեցող բարձրագույն կամ միջնակարգ կրթությամբ զոտեխնիկներին:

6. 2 ամիս առաջ, մինչ բոնիտիրովկան սկսելը, յուրաքանչյուր կոլտնտեսության (կոլտնտեսություն, խորհուտնտեսություն, պետքուծարան) դուռը պետք և կազմված լինի վոչխարների բոնիտիրովկան անցկացնելու պլանը: Պլանում պետք և ցույց տըրված լինի տվյալ տնտեսության մեջ բոնիտիրովկայի յենթակա վոչխարների զլսաքանակը, նշելով ցեղը, սեռը, տարիքը և գործիքների—ինվենտարի և նյութեղենի քանակը, վորոնք անհրաժեշտ են բոնիտիրովկան անցկացնելու համար:

Պլանի կազմելը դրվում է՝

ա) խորհուտնտեսությունների ժողկոմատի իրավասության տակ գտնվող խորհանտեսությունների դուռը համապատասխան վարչությունների վրա.

բ) ըստ կոլխոզների, պետքուծարանների և ՀԺԿ տովխոզների՝ հանրապետական հողժողկոմատի անասնապահական վարչության վրա:

ԲՈՆՏՏԻՐՈՎԿԱ. ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Յուրաքանչյուր հոտի բոնիտիրովկայի հնարավորությունը և ներթականստեթյունը վորոշելու համար, նախքան բոնիտիրովկան զոտեխնիկ բոնիտայորը տնտեսության ղեկավարի և ավ. անառնապետի հետ միասին պետք և ստուգի բոնիտիրովկայի յենթակա յուրաքանչյուրը հոտի վոչխարները, վորպեսզի ծանոթանա վոչխարների զլսաքանակի, զոտեխնիկական և անասնաբուժական զրությանը:

8. Եախքան բոնիտիրովկան զոտեխնիկի բոնիտայորը պետք և ստուգի տոհմային բոլոր զրանցումների ճշտությունը և ծանոթանա զոտեխնիկական հաշվառման ավյանների հետ (խուզի, զուգավորման, զառներին ծծից կտրելու հաշվեկտությունները, կերպային պլանները, տեղեկագրերը և այլն), նաև անասնաբուժական հաշվառման ավյանների հետ, վորպեսզի մինչեւ բոնիտիրովկայի

սկիզբ գաղափար կազմի տվյալ հոտի վորակի և նրա անառաւ-
բուժական-սանիտարական դրության մասին:

9. Հոտը ստուգելուց հետո զոտեխնիկ-բոնիտայորը տվյալ
անտեսության վրչարների բոնիտիբովկայի անցկացման պլանը
պետք և ճշտի: Պահում պիտի ցույց տրված լինի՝
ա) անհատական և գասային բոնիտիբովկայի յենթակա վոչ-
խարների քանակը.

բ) որացուցային ժամկետները և յուրաքանչյուր հոտի բո-
նիտիբովկայի գայըը.

գ) բոնիտիբովկան անցկացնելու համար անհրաժեշտ բանվո-
րական ուժի պահանջը, ինվենտարի և նյութեղենի պահանջը:

10. Վոչխարների բոնիտիբովկայի անցկացման պլանը քննու-
թյան և առնվում տվյալ անտեսության (սովորություն, կոլյուզ, պետ-
րուծարան) արտադրական տեխնիկական խորհրդակցությունում:

11. Բոնիտիբովկան անցկացնելու համար նախապես յուրա-
քանչյուր անտեսությունում պետք և պատրաստած լինի՝

ա) ունիլի, ականջների կտրվածքի համար 3 հատ
բ) հինգ բնանի տառությունուներ մասը թվերի
կոմպլեկտով, մեծությամբ 5—7 մմ 2 հատ.

գ) ականջի մետաղյա գինդեր և ունիլի դրանց
համար.

դ) գինդերի վրա համարներ և տառեր խփե-
լու կոմպլեկտ 2 հատ.

ե) յեղջուրները խարանելու համար թվերի
կոմպլեկտ 2 հատ.

զ) գրքեր անհատական բոնիտիբովկայի գրանց-
ման համար.

է) խալաթներ 4 հատ.

ը) մեծ շշիտներ 3—4 մետր յերկարությամբ 40 հատ.

թ) փոքր շշիտներ մետրանոց 6 հատ

ժ) կամուրջ (փոքրիկ) բոնիտիբովկայի անցկացման
համար յերկարությամբ 1,5 մետր, լայնությամբ 40 սմ 1 հատ

12. Բոնիտիբովկայի անցկացման ժամանակ զոտեխնիկ-բո-
նիտյորը, անձամբ պիտի ստուգի վոչխարների համարակալման
ճշտությունը և առանձնապես մանրազնին պիտի ստուգի տա-
տուիրովկայի միջոցով ականջներին արված համարները:

13. Յուրաքանչյուր անտեսությունում բոնիտիբովկայի ժա-

մանակ պետք և խստիվ պահպանել անառարուժական պրոֆիլակ-
տիկ կանոնները:

ԲՈՆԻՏԻԲՈՎԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

14. Վորպես կանոն, յուրաքանչյուր հոտում ամեն տարի
պետք և բոնիտիբովկայի յենթարկվեն անցած տարվա ծնված բո-
րուր մատղաշները:

Այն անտեսություններում, վորակի բոնիտիբովկան անց և
կացվում առաջին անգամ, կամ վորակի մինչ այդ յուրաքանչյուր
տարի չի անցկացվել սխսեմատիկ բոնիտիբովկա, բոնիտիբովկայի
պետք և յենթարկվեն առաջներում բոնիտիբովկայի չենթարկված
վոչխարների վողջ գլխաքանակը:

15. Առաջին անգամ ^{11/2} տարեկան հասակում գուգավորվող կոպտաբուրդ
նըրազեղմ և կիսակոպտաբուրդ վոչխարներին բոնիտիբովկայի յեն-
թարկում գարնանը նրանց մեկ տարեկան հասակում լրիվ
ըրդի մեջ:

I անգամ ^{11/2} տարեկան հասակում գուգավորվող կոպտաբուրդ
վոչխարների բոնիտիբովկան անհրաժեշտ և կատարել աշնանը,
աշնանային խուզից առաջ, մինչ գուգավորումը:

16. Հզի մաքիների բոնիտիբովկան հղիության II շրջանում
չի անցկացվում: Դա պետք և հետաձգել ճնի վերջը և անցկացնել
խուզելուց առաջ:

17. Աշնանը, զառներին ծծից կտրելու ժամանակ, վողջ մայ-
րական գիմաքանակը պարտազիր կարգով պետք և զննան յեն-
թարկվի, նպատակ ունենալով իրենց տարիքով սխսեմատիկ ստեր-
ցությամբ և խրոնիկական հիվանդություններով անպետք ճանաչ-
ված մայրերին խոտանման յենթարկելու, իսկ ելիս հոտերում, բացի
զրանից, նպատակ ունենալով խոտանել և իրենց վորակով ցածր
մայրերի գասային հոտ փոխազերւ համար, փոխարինելով
վերջիններին լավագույն ելիս շիշակներով:

Ելիտարից հեռացվում են մայրեր, վորոնք սխսեմատիկարար
իրենց վորակով վատ գառներ են տալիս և ժառանգական այլան-
դակությամբ զառներ են ստուգվում, նաև զտարյուն նըրազեղմ և
կիսակոպտաբուրդ մայրերը, վորոնք մաքուր բուծման զեպքում
սխսեմատիկարար մեկ և խայտարգեա զառներ են տվել: Ելիտ-
արից խոտանվում են նաև 2 տարի անընդհատ ստերջ մնացած մա-
քիները:

18. Ծծից կտրելու ժամանակ մեկ խոյով սերմնավորված յու-

բաքանչյուր հոտի գասային մայրերից ստացված գառների զննումն է կատարվում, նպատակ ունենալով հայտնարերել խոյի տոհմային հատկանիշները:

19. Տնտեսության մեջ աշխատող տոհմային խոյերը բոնիտի-բովկալի ժամանակ դնահավոր հատկանիշների նկատմամբ ամեն տարի գարնանը յենթարկվում են անհատական զննման, բացի այդ, զուգավորումից առաջ խոյերը անհատապես զննվում են և սահմանվում են նրանց վերջնական կազմը զուգավորման համար:

XII. ԲՈՆԻՏԵՐՈՎԿԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

